

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի
 ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքը (Գեղամավան ու Վարսեր բնակավայրերը) ներառող միկրոռեզիոնալ մակարդակի համակցված փարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
 (Սևան համայնքի (Գեղամավան ու Վարսեր բնակավայրերի) գոյությունն նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.



1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Գեղամավան ու Վարսեր բնակավայրերի գլխավոր հատվածներում հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
0.22503 հա ընդհանուր մակերեսով (կադաստրային ծածկագրերն ամփոփված են հավելվածում) գյուղատնտեսական նպատակային նշանակության հողեր	0.22503 հա ընդհանուր մակերեսով (կադաստրային ծածկագրերն ամփոփված են հավելվածում) էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի՝ էներգետիկայի հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պայմանը (կցվում է):

4. Սևան համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Գեղամավան ու Վարսեր բնակավայրերի ընթացիկ քաղաքաշինական քարտեզներում,
 - ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի (Գեղամավան ու Վարսեր բնակավայրերի) հաստատված գոտևորման նախագծերում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		Ե. Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		Հ. Դավթյան

